



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

211  
7924

1380


Ն. ԼՅԱՇԿՈ

# ԶՈՐԱՑՈՂ ԹԵՎԵՐ




---

ԳՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ, ԶՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
 ԻՐԱՎԿԱ, 1928



Ն. ԼՅԱՇԿՈ




# ԶՈՐԱՑՈՂ ԹԵՎԵՐ

Բարգմ. Ս. Բ.

76421

A  $\frac{7}{8195}$



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՆՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԻՐՈՅԿՎԱ, 1928



Главлит № 96816. Зак. № 604. Тираж 3000.



# I

Արշալույսը շիկացնում է ծովի պողպատափայլ հարթությունը: Ծովը ներկում է տները, շրջափակերը և խառնում է նավերի ստվերները: Ծովախորշի յետևում, նկուղում, ինձ սպասում են ժանդարմները, խկ քաղաքի յետևում, բանտում, սպասում է առանձնոցը: Հեռ՛ա այդ ամենից: Առավոտի աղիաբույր շունչը դեմքս է վողողում և գրավում դեպի լեռնային մառախուղը, վորին արևը արդեն դիպել է:

Դեպի կիրճը տանող պտույտից յետ եմ նայում: Ծովը վառվում է, տների պատերը հեղեղված են վոսկի ցուքով... Մի քանի քայլ ևս... և կծածկվեն: Ալիքների աղմուկը, նավահանգիստը, նավարանները՝ նեցուկների վրա բռնված նավերով, ջուրընկեց արևը կա՛րճ ժամանակ ինձ հուզեցին:

---

Շտապում եմ. հիշում նավահանգստի գործարանը, դազգահի հարևաններին, ընկերներին, նախընթաց գիշերվա նրանց հոգսերը իմ մասին և հրճվում: Ազատ եմ:

Տաք ծովի հալ ընկնող շերտը, վառ կապույտ յերկինքը, քարերի ճեղքերից դուրս ձգտող ծաղիկները, վիթխարի լեռները ժպտում են, շշնջում սրտիս թրթիռի մասին, իմ տասնևութ տարիների մասին:

Քանի որեր, ամիսներ և տարիներ ունեմ առաջիս: Վորքան քաղաքներ, գործարաններ, հանդիպումներ, բանտեր և աշխատանք: Գնանմ նրանց մոտ:

## II

Արևի շերմությունը իմ թիկունքի, իմ ուսերի վրա յե, և յես ուրախանում եմ այն ձեռքերի, մուրճերի ու բրդիչների համար, վորոնք ծակել են սարը, ուրախանում եմ այն շոգեմեքենաների և վագոնների համար, վորոնք նրա միջով այնպես արագորեն տանում են մարդկանց:

Քայլում եմ: Լույսն ու կապուտակը ճեղքում են խավարն իմ առջև: Վորքան մոտիկ, այնքան ավելի պայծառ—և նորից վոսկի արևը ծփում է

---

---

վրաս, և նոր լեռներ իրար յետևից դուրս են լողում և շարժում կատարները:

Կեռասի վարդագույն պարտեզները հեղեղված են կաթով և ծածանվում են, աչք են կուրացնում: Կաղամախիները հսկում են նրանց, ծիծաղում սաղարթներով: Հեռվից կռնչում ե շոգեմեքենան: Սպասում եմ նրան: Նրա շոգուց և դղբդոցի ալիքից շշկլված՝ վազում եմ, շտասլով բռնում եմ պլատֆորմի ունկից և կախ ընկնում: Արբած սրտով սլանում եմ դեպի տեղափոխվող լեռները: Դարձնում եմ գլուխս, և իմ մեջ ձայներ են հրձվում թնդագին:

— Ա-ա-ա, ահա նա. — հեռվում հետզհետե լայնանում ե լեռների յետևից հանկարծ հայտնված ծովի կրակոտ կապուտակը:

Ամբողջովին վոսկի յե, թրթիռ և ծիծաղ: Առանձնաց, սպասիր: Թող ամեն քաղաք թռչեն հեռագիրներ, վոր ինձ բռնեն և բերեն այստեղ՝ բանտ: Յերբ և իցե կբռնեն, կբերեն: Իսկ առ այժմ յես թռչեմ՝ ուրախ ծովի ազատ հայացքի տակ, թռչեմ դեպի լեռներով ծածկված ընդարձակությունները, դեպի ոտար քաղաք:

Մովը ծածկվում ե: Մնաս բարձր: Շուրջս պարտեզների ընդարձակությունն ե: Մաղկիր, ծաղկիր, գետին: Հրապուրեցեք, լեռներ: Կան-

---

չեցեք, հեռաստաններ: Վառվիր, ծնվ: Միլիոնա-  
վոր սրտեր կտրոփեն ձեր հանդիման, միլիոնա-  
վոր աչքեր լույս կշաղեն ձեր վրա:

Գնացքով անցնում եմ փոքրիկ քաղաքների  
մոտով, տեսնում նրանց կաղամախիները, մինա-  
րենները, անցնում եմ կայարանների մոտով, վո-  
րոնք ձյունային վարդագուլյն են: Իսկ լեռները  
ամբողջ ժամանակ ինձ հետ են, կողքիս, ամբողջ  
ժամանակ ճոճվում են, վողջունում: Մուխը  
թագցնում է նրանց:

Ամբողջ գիշեր աշխույժ կանչում է շոգեմե-  
քենան և սուլում է ինձ՝ հոգնածիս, քնեածիս:  
Առավոտյան յես տեսնում եմ, թե ինչպես կող-  
քիցս վազում է մի այլ յերկիր, տեսնում եմ այլ  
յերկինք: Սև դաշտերը հազիվ են շրջանակված  
գմբուխտի շերտերով: Միջանցիկ ծառերը վառ-  
վում են ճայթած բողբոջների կանաչ կայծերով:  
Խանդակների մոտ ցուլում է կիսակույր պուտը:  
Իսկ աչքերիս առաջ կանգնած են լեռները, ծովը,  
կեռասի ձյունային շղարշը:

Քուն և տաղակուլթյուն եմ տեսնում ճանապար-  
հորդների դեմքերին: Յերկինք և արև, դուք մրի  
մեջ եք: Գարուն, ում համար ես դու մեծաքայլ  
անցնում լայնածուփ դաշտերով: Մի շարժիր,  
մի շարժիր տերևները, մի թողիր, վոր զրնգան

---

---

աղբյուրները. քեզ չեն տեսնում, քո գալովը չեն  
ուրախանում... Վե՛չ, լսի՛ր: Սովորեցրու սրբել  
դեմքերից ձանձրույթը և քունը:

### III

Քաղաքը գետի ափին է, բլրի վրա: Քարե գորշ  
ափին աշխատանքի թնդյունն է տիրում: Գետի  
յետևում փայլում են վարար ջրով ապակված  
մարգերը, յեղեգների ցանցերը: Իսկ քաղաքի յե-  
տևում լայնարձակ տափաստանները խորհում են:

Տները, ցեխը և քաղաքի առորիան յես նկա-  
տում եմ միայն առաջին որերը: Հետո դառնում  
եմ խուլ և կույր, հափշտակված՝ հուզող, մոլեգլին  
գործով. տափաստանում, ձորերում, գետափին  
յերեկոները հավաքվում են ինձ նմանները: Հա-  
վաքվում են յերամներով, ահագին խմբերով:

Ծովի ափին ել այդ կնիք, բայց գաղտնի յեր,  
հազիվ նկատելի: Իսկ այստեղ յեռում է, խաղում,  
փրփրում: Յեվ յես պտավում եմ նրա մեջ, մար-  
զվում, կռում-կոփում եմ ինձ:

### IV

Աշխատում եմ մի շատ փոքրիկ տնայնա-  
գործարանում: Սառատի դազգահը մի հատ է,  
կլինի մոտ քսան տարեկան, — վետերան է, ծե-

րացած, գառամած: Շրջանակը ծուռումուռ է, այս և այն մասերը խախտված են, մաշված, փամփուռտի մուրճիկները մնասված: Աշխատանք չէ, այլ տանջանք. մեքենան յետ է խփում, խաղում է, դողում:

Հարբած ծեր տիրոջը խորհուրդ էմ տալիս նորոգել դազգահը:

Նա կկոցում է ողուց և քթախոտից արցունքված աչքերը, ձեռքը խփում է դազգահի սյանը և հարձակվում վրաս՝

— Սրմն նորոգեմ: Իսկ ինչո՞վ է նա վատ: Ժամօ է տրված: Յեթե գիտենաս՝ սա դազգահ չէ, այլ ձի՛ յե, առաջնակարգ նժույգ: Իսկույն յերևում է, վոր դու մեծ գործարաններում ես աշխատել: Կարելի յե՝ նրան խաթրիդ համար բաղանի՞ք տանենք, խուզենք-սափրենք: Քիթդ շատ մի բարձրացրու, ձենդ-ծպուտդ քեզ քաշիր, աշխատիր...

Ուսերս գցում էմ և առաջարկում չվերցնել նուրբ ու խստապահանջ պատվեր:

— Չվերցնեմ խստապահանջ պատվեր, — բորբոքված բղավում է ծերը: — Յե՛վ դու այդ ասում ես ի՞նձ՝ տիրո՞ջս: Այդ, յեթե կուզես իմանալ, քո խելքի բանը չէ:

— Բայց չե՞ վոր անկարելի յե կարգին աշխատանք կատարել այսպիսի մի ավեր գործիքով:

— Անկարելի՛ յե: Դու դեռ շատ ես ջահել  
ինձ բան սովորեցնելու համար, դու դեռ տխմար ես:

Անբավական շարժումներ եմ անում ձեռքով և  
խոնարհում եմ գլուխս սուպորտի վրա: Իսկ նա  
իմ գլխին թափում է քրթմնջուկն, հայհոյանք և  
կիսարբած աչքերի կայծեր: Մոնոտոններն իմ  
աշկերտության տարիներում ինձ այնպես չեղին  
կրծում, ինչպես այդ ծերը:

## V

Պատուհանների մոտ յերեք մեքենաներով դազ-  
զահն է կանգնած: Յերկուսի առաջ աշխատում  
են մանր փականագործներ: Դեմքերը գորշ են,  
մաշված և խոժոռ: Տիրոջ ներկայությամբ կար-  
գին աշխատում են, իսկ յերբ նա չկա — հա-  
զիվ են շարժվում, ծխում են կամացուկ և ինչ  
վոր մտածում: Չանձրանում են: Յես նրանց  
համար քրթմնջող մեքենայի մի մասն եմ: Յես  
կարծես չկամ:

Նրանց սիրալիր, փաղաքշական դեմքերը յես  
տեսա միայն մի անգամ, պատահաբար: Ճաշին  
նրանք փողոցից ցախատուն յեկան, դուրս դար-  
կին ողու շիշից խցիկները, յետ ձգեցին գլուխ-  
ները և վոչ թե խմեցին, այլ իրենց ներսն ածե-  
ցին ողին: Յեվ, քանի վոր ողին այրում էր բե-

բանները, նստած էին անշարժ: Շրթունքների վրա պսպղում էին կաթիլները, աչքները ըողում էին ջերմությամբ: Բայց յերբ ձեռքները մեկնեցին նախաճաշելու, դեմքները ելի գորշացան, մռայլվեցին: Մի բան տանջում եր նրանց:

Ձուլարանը կողքներին ե: Նրա մեջ աշխատում են վեց հասակավոր և յերկու տղա: Մինչև վուկորների ծուծը թաթախված են գրաքարի փոշու մեջ, մրի և տաքացրած խոնավ կավի հոտի մեջ: Կաղապարման ժամանակ յերգում են: Նրանց ձայներից զվարթանում ե գործարանը: Բայց նրանք յերգում են յերեք-չորս յերգ — «Մարուսյա», «Թուլյն», «Հրաշալի լուսին», «Հիմիկվա վերջին որիկը», — յերգում են միապաղանդ և թախիծ են պատճառում:

Յես արտագրում եմ «Ձուլհակի յերգը», կարդում եմ՝ բարակաձայն թոքախտավոր նախերգակին՝ և ասում՝

— Լավ կլինե՞ր՝ սովորեյի՞ք: Մա ձեր յերգերից լավ ե:

— Ի՞նչն ե նրա մեջ լավ. — գարմանում ե նա: — Մենք ջուլհակներ չենք... Ա՛յ, յեթե ձուլողների մասին լինե՞ր...

— Այո, բայց ելի «Ձուլհակի յերգը» «Մարուսյայի» հետ չի կարելի համեմատել:

---

---

— «Մարուսյայի» հետ: Վճ—չ, յերբայր:

— Ի՞նչն...

— Ինչպես թե՛ ինչ:

— Ի՞նչ լավ բան կա մեջը:

— Իսկ քո յերգի մեջ ի՞նչ լավ բան կա:

— Իմ յերգի մեջ կյանք կա... մեր կյանքը:

Դուք միայն լավ մտածեցեք արտասուքների վերաբերյալ խոսքերի մասին: Ահա. «Գործին խանդարելը, գիտցիր, հիմքը մնաստում ե... Ե՛լ... Չուլհակի կյանքը թեթև չե՛: Իսկ այն, վոր ձուլողների մասին չե, մնաս չ՛ունի: Ջուլհակն ունի դազգահ, իսկ դուք ունեք ֆորմաներ, պտուկներ... եյությունը միևնույնն ե:

— Եյությունը,— հոնքերը բարձրացնելով՝ փրթացնում ե նախերգակը և, ծիծաղելով, հեռանում ե ինձնից:

Յես կատաղությամբ բանեցնում եմ մեքենան: «Սրանց յերգերից խելքս բան չի կտրում»: Ձուլարանում քահ-քահ ծիծաղում են: Ծիծաղեցեք, ավելի բարձր ծիծաղեցեք. յես կսովորեմ շարժել ձեր չե՛ թե միայն ծիծաղը...

## VI

Շարաթ որը, ոռճիկ ստանալուց հետո, ձուլողները կանգ են առնում դարպասի յետև: Նախեր-

---

---

գակը կանչում ե ինձ կոնծելու նոր տեղի առի-  
թով և շնջում ե ականջիս՝

— Գո այն յերգն ել կերգենք... շուհակի  
մասին...

— Ողուց հետո արջերն ել կերգեն, — ասում  
եմ բարձրաձայն: — Ուզում եք՝ գնանք տափաս-  
տան, այնտեղ յերգենք...

— Անհարմար ե, — փնթփնթում ե մեկը: —  
Առանց թրև գալու յել վոսկորներս ցավում են:  
Գնանք գինետուն:

— Այնտեղ տաղտկալի յե և ողը ծանր...  
Բացի այդ՝ յես չեմ խմում...

— Ինչպես թե՛ չես խմում:

Ձուլողները շրջապատում են ինձ, լավ նայում  
են վրաս և գարմանում.

— Ա - մե - նե - վի՛ն: Ձե՞ս ել խմել:

— Խմում եյի, բայց թողի:

— Յերգվե՛լ ես:

— Վոչ:

— Բա ի՛նչպես:

— Ձգվեցի: Հարբում ես — ասես պարկն ես  
ընկնում... Յեվ թավալ - թավալ ես անում մեջը՝  
խոյի նման:

— Բա սկի չի՞ քաշում, սիրտդ չի՞ ուզում:

— Վոչ:

---

---

— Իսկ յերբ տաղտուկ ես զգում՝ այն ժամանակ ի՞նչ ես անում: Անշուշտ կնիկ ունիս:

— Չունիմ...

— Բա ի՞նչ ես անում:

— Կարդում եմ:

— Կար-դում ես:

— Իհարկե...

Չուլողները ժպտում և աչքով են անում իրար: Նախերգակը ծիծաղում է և ասում՝

— Դե, դու մի խմիր. կնատես մեզ մոտ, իսկ մենք քո կենացը կկոնծենք:

— Յես առանց այն ել առողջ եմ, հո հազար տարի ապրելու չեմ:

— Դե, տուր փողը, մենք առանց քեզ ել կխմենք:

— Չարժե... լավ է աղքատներին տամ:

— Ի՞նչ: Քո կարծիքով ուրեմն աղքատները... Դե վոր ետպես ե, ել ի՞նչ եյիր սուտ-սուտ բրդում, սուտ խոստումներով մեզ խաբում: Դեռ պատրաստ եյիր յերգեր յերգելու: Գնանք, տղերք... Համառում ե, կոտորովում... լայաղ չի անում...

Չուլողները խմբով գնում են նախերգակի յետևից, քայլելիս խոսում են իրար հետ և բարձրաձայն քրքջում: Նայում եմ նրանց վրա և գիտակցում, վոր կորցրի նրանց. յերկար ժամանակ պիտի հիշեմ այս դեպքը, պիտի կար-

---

---

մրեմ: Չկարողացա մոտենալ, ոտար թվացի, նորից ծիծաղ հարուցի:

Փոքրիկ գործարանում այդ որվանից ինձ կոչում են՝

— Չխմող դալմադալչի...

«Թհդ, Թհդ. — կրկնում ե ձայնը իմ մեջ:— Եհ, չկարողացա. ի՞նչ անենք վոր չկարողացա, ի՞նչ կա վոր: Չե՞ վոր գինետնից-գինետուն թափառելու չեմ: Հերիք ե վորքան թափառեցի, թավալվեցի կեղտում... Բավական ե ամբողջ կյանքիս համար»:

## VII

Աշխատանքից հետո գնում եմ գետափ: Տասը հոգի նստում ենք նավակը և լողում կամուրջի տակ: Հեռվից յերևում ե՝ թե ինչպես շուռ տրված նավակի մոտ, ձեռքերով ծնկները գրկած, վորպես կույր, նստած սպասում ե մեզ Իվանիչը: Սևահեր, փոքրիկ, վտիտ՝ նա նման ե գործազուրկի: Հենց վոր լսում ե մեր ձայնը, վեր ե կենում, աչքերը կկոցելով, անվստահ գալիս ե դեպի ջուրը և բարձրանում ե նավակի կողքի վրա: Նստում ե, պենսնեն դնում քթին և, առաջին անգամ լույս տեսածի պես, փայլեցնում ե աչքերը ապակիների յետևից, գլխով ե անում.

— Բարով յեկար, Կրապիվին: Ա.—մ, Յուրա:  
Իսկ դուք, Գոլուբև, գրքույկը կարդացի՞ք: Ուշա-  
դրությամբ կարդացի՞ք... Բոլորդ հավաքվեցի՞ք:  
Շատ լավ. այսօր ամենագլխավոր հարցի մասին  
պիտի զրուցենք...

Ամեն մի զրույց մոտեցնում է գլխավոր հար-  
ցին, ամեն մեկը նոր է, հուզում է, իսկ գլխա-  
վոր հարցը յետ է քաշվում, լողում հեռու: Ավելի  
և ավելի խոհեր, ավելի և ավելի գգացմունքներ...  
Յե՛վ թվում է, թե զրույցներում չկա գլխավորը,  
մեծը, փոքրը: Ամեն ինչ կարևոր է, ամեն ինչ  
պետք է, ամեն ինչ առաջնորդում է:

Լողում ենք գործարանների, նավանորոգարանի  
առջևից, անցնում ենք բեռնակիր նավերի, բար-  
կանավերի և շոգենավերի բոլորքով: Գետախորշում  
հազիվ ենք շարժում թիյերը: Անհարմարությունը  
և խռպոտությունը խեղդում են Իվանիչի ձայնը:  
Նա խոսում է դժվարությամբ, դանդաղ՝ մինչև  
վոր տաքանա: Այն ժամանակ բարձրացնում է  
գլուխը, մեզնից մեկի վրա հառում աչքերը և  
մոռանում բոլորի մասին: Նրա մտքերը ծանր են,  
ուղտերի պես են քայլում: Նա կարծես ցույց է  
տալիս մեզ այդ մտքերը, հետո սարսափում է  
նրանց անշնորհքության համար և սկսում է  
նրանց մտրակել որինակներով, համեմատություն-

ներով, հարցերով: Նրանք կենդանանում են, տա-  
քանում և վազում, սլանում ընդոստ, հուզում,  
ապշեցնում: Նրանց տաքությունից, փայլից աչքի  
առաջ մշուշ է կանգնում: Չքանում են՝ նավակ,  
ընկներներ, գետ: Յերևակայության մեջ վայրե-  
նին կրակ է ճարում. բարձրանում են գործա-  
բաններ՝ ապակիները ջարդված բաց լուսամուտ-  
ներով, և ջուլհակների ձեռքով ջախջախված մե-  
քենաները կույտեր են կազմում:

Լուելով՝ Իվանիչը ինձ անցյալից հանում նե-  
տում է նավակի մեջ: Ճնցվում եմ և նայում  
նրա վրա. փոքրիկ, կարճատես, խիստ նման գոր-  
ծազուրկի: Բայց ինչպիսի ույժ: Վճրտեղից է  
նա: Ո՞վ է: Չե՞ վոր...

Միտս են գալիս՝ փոքրիկ գործարանը, հարբած  
գործարանատերը, փականագործները, ձուլողները  
«Մարուսյա», «Թուլյն» յերգերով... Չգացնում են  
և ուրախացնում՝ փորագրող կրապիվինը, գրաշար  
Յուրկան, կաղապարագործ Գոլուբևը, մեր յե-  
րագները: Ո՞ւր ենք մենք, կհասնե՞նք արդյոք  
մենք խոթ, վտիտ գործարաններից, «Մարուսյա-  
յից», խոժոռ դեմքերից մինչև այն աշխարհը,  
ուր ամեն ինչ այլ է:

Միրտս, ասես, սառույցն է ծակում. մենք խի՞՞  
ենք, հիմքի առաջին քարերն ենք: Շերտ-շերտի


վրա, սերունդ-սերնդի վրա կրնկնենք... Յեւ կղի-  
մենք ավելի բարձր, դեպի կապուտակը, միշտ  
ավելի բարձր...

Կրծքիս տակ դողում ե մի բան: Հարցերը  
շփոթված ենք տալիս, ամաչում ենք, գլխով ենք  
անում՝ իբր թե հասկանում ենք, ամեն ինչ հաս-  
կանում: Ի վանիչը միշտ չի հավատում մեր գըլ-  
խով-անելուն, հարցնում ե, թե ինչպես ենք հաս-  
կանում, և ամաչեցնում ե՝

— Այ, տեսնո՞ւմ եք, դեռ գլխով եք անում:  
Այդպես չի կարելի...

Այդ հուզում ե մեզ և ավելի մտերմացնում  
նրա հետ: Դեպի քաղաք լողում ենք յերգելով:  
Մեզնից վոմանք — նրանց թվում նաև յես —  
ափից շտապում ենք դեպի քաղաք: Տափաստա-  
նում խառնվում ենք գաղտագողի գնացող սովեր-  
ներին և սահում բաց տարածության վրայով  
դեպի մթությունը: Յես ամեն անգամ կանգ եմ  
առնում մարդկանցով լցված ձորի մոտ, նայում  
եմ նրա միջի փոքրիկ, վոսկի կրակներին, վորոնք  
ճոճվում են մեղունների պես, ահանջ եմ դնում  
ներքևում խոխոջացող խոսակցության: Հանկարծ  
հնչում ե,

— Ս - ս - ս... — և մարեցնում ե թնդյունը:



Ձորի խորքից վեր ե սլանում ձայնը և լողում ե, լողում, մի բան ե փնտրում մեր մեջ, դառնում ե, այրում ե և կտրվում: Նրան փոխարինում ե մի ուրիշը: Ջերմութուն կա, կրակ կա նրանց ճառերում: Լսում եմ նրանց՝ ինչպես յերգ, ձուլվում եմ նրանց հետ, ձորի հետ, գիշերի հետ, ամեն մեկի հետ, ով վոր պետք ե դողա այստեղ՝ ինձ հետ միասին: Վորքան են նրանք: Միլիոններ, հարյուր միլիոններ... Մենք միայն մի բուռն ենք... մի փոքրիկ խմբակ...

Պոսակցութունը և իրարանցումը փոխարինում են ճառերին: Ձորը դուրս ե ցայտում սովերների մի ամբոխ: Գնում եմ նրանց յերամում դեպի՝ քաղաքի ցուքը: Ականջ եմ դնում նրանց խոսքերին և տրտմում եմ. այն չեն ասում, այն բանով չեն ապրում... Բայց տրտմութունը քաղաք հասցնել դժվար ե. չե՞ վոր մենք առաջին ծիծեռնակներն ենք, մենք խճճված ենք հոգսերի, վշտերի, կարիքների ցանցի մեջ...

Այսպես՝ ամեն որ: Իսկ տոն որերը ավելի մոլեգին, ավելի ճոխ ու փարթամ: Մծում եմ, միտս պահում: Մերթ վայրկենապես ահն ե տիրում. իսկ յեթե հանկարծ ինձ դուրս շարտեն այս կյանքից, խանգարեն ծծել բոլորը: Յեվ հոգիս լարվում ե, դողանջում:

## VIII

Ազատութեան ամեն մի ժամը ուրախութիւնն է: Ճաշի ժամին, գիրքս առած, գնում եմ բակի հեռուն և թագնվում ցախատան յետևում: Տիրոջ թողը յերբեմն-յերբեմն գաղտուկ մոտենում է թուջե ձողերի կույտին, նրանց յետևից նայում ե վրաս և բարձր ձայնով, վոր լսեմ, ասում է կողքի շենքում՝

— Մեր խառատը հա կարդում է, հա կարդում...

Մի անգամ, ճաշից հետո, ինձ մոտենում է գործարանատերը, ծաղրաբար կկոցում է աչքերը և հարցնում՝

— Դեռ չես շմել:

— Ինչից:

— Գրքերից, ելի:

— Վոչ:

— Ամեն ոք ես կարդում:

— Ամեն որ:

— Այ քեզ խելոք մարդ: Կառավարչի նման է, գրքերով է աշխատելու գնում: Միայն, յեթե կուզես իմանալ, քո բանը չի այդ: Այո-հ, քո բանը չի: Իսկական խառատը մըջյունի պես է: Այսոր կկոնծե, բայց թե վաղը աշխատանքի կպչի —

ամեն ինչ կմոռանա: Նա իսկույն տարբերվում  
է: Իսկ ըո ուշը - միաքը ուրիշ բանի հետ են...  
Քեզանից հոտ է գալիս...

— Ի՞նչ հոտ, — հարցնում էմ:

— Գրողը գիտե:

Գործարանատերը կռանում է արկղի վրա,  
վերցնում գրքերը և ծաղրում է նրանց և ինձ՝

— Ո - հո, «Աստղա - բաշխու - թյուն»: Ինքը  
սատանան անգամ չի լսել այդպիսի բան —  
«Աստղա - բա - շխու - թյուն»: Ահա մի ուրիշն ևս —  
«Զա - այն»... Այ գրողը քեզ տանի, յեթե դու  
նրանցից մի բան հասկանաս...

— Կհասկանամ:

— Բայց վնչ ըո գլխով:

— Վոչինչ... մեր գլխով ել կփորձենք... — պա-  
տասխանում էմ յես:

Նա ցած է դնում գրքերը և զգուշացնում՝

— Տես, հանկարծ մի բան դուրս չգա...

Նայում է վրաս և աչքով անում՝

— Հասկանո՞ւմ ես:

— Վոչ, — ասում էմ:

Նա ճկվում է, շնչում վրաս ողու հոտով և  
զնչում՝

— Կկորչես հիմարների համար: Դու նրանց  
կսովորեցնես այս, այդ, այն, իսկ նրանք...

---

---

Նրանք քեզ կմատնեն մի շփիկ ողու համար,  
առանց սակարկութեան: Իսկ դու աշխատում ես,  
աշխատում, հիմա՛ր: Կարծում ես՝ չգիտեմ:

— Գիտնալու բան չկա:

— Ձկն: Բա դու նրանց ի՞նչ եյիր ասել: «Ըն-  
կերներ» անուհով ինչպէս եյիր մեծարել: Ի՞նչ  
յերգ եյիր արտագրել: Ո՞ւր եյիր կանչել: Հն-  
հն-հն... Տափաստան գնանք, կխոսենք, իբրև թե...  
Առանց մի շփիկ ողու յել հայտնեցին ինձ բոլորը...  
Կոնծելու չգնացիր. այ, ուզեցիր ասել, տեսեք  
թե ինչ եմ յես — «կանոն հավատո և պատկեր  
հեղութեան»: Թոռացիկներ ես ստանում, սրան-  
սրան հրամցնում: Մի կեղծիր, մի կեղծիր, ել  
ուրիշը չկա: Միայն դու յես այդպես, քեզ  
ամենքից շատ ե հարկավոր... Յե՛վ կստանաս...  
Յես հայրաբար եմ ասում:

Ձայնը դողում ե, շրթունքներից փաղաքշանք  
ե ծորում.

— Յես առանց վատ դիտավորութեան եմ  
ասում... Ինքս սովորող թոռ ունեմ... — Բայց  
արտասովող աչքերում հսկող, սպասող մի բան ե  
առկայծում, վոր պատրաստ ե բռնկվելու:

— Դուք գնացեք ձեր թոռանը սովորեցրեք,  
իսկ յես ինքս մի կերպ...

— Ի՞նչդ: Իսկ յերբ մուտրվես: Դու լավ ե  
ամբարտապան չկենաս, չեմ ու չում չանես,  
լսում ես:

Դուան մոտ մերթ-մերթ յերևում են ձուլող-  
ների կապույտ բլուզները: Տերս ծուռ նայում ե  
նրանց վրա, մեր խոսակցության ականջ դնող  
փականագործների վրա, ապա բարձր ձայնով  
շարտում ե յերեսիս՝

— Հիմար, քո ոգուտը չես հասկանում. — և  
հեռանում ե:

— Դե ի՞նչ անեմ, վոր չեմ կարողանում հաս-  
կանալ. — ասում եմ ու թախծում, մեծ գործա-  
րանի կարոտը քաշելով:

Այնտեղ՝ դազգահների անհամար սյուճներ: Հա-  
զարներով ատամնավոր անիվներ կարծես գիթառ-  
ների վրա յեն հնչեցնում: Կապույտ բլուզների  
ծով, հազարավոր հանդիպումներ: Իսկ վորքան  
գործ: Յեվ ի՞նչ աշխատանք:

Իսկ այստեղ փլատակն ե թխկթխկացնում:  
Դազգահների վրա—պտուտակավոր փականքներ,  
վառարանի արք ու սարք: Ամենալավ աշխա-  
տանքը — երնելու մեքենաների պատիկ գլանակ-  
ներ շինելն ե:

Տաղակալի յե:

## IX

Գարնան ատաղին փայլակը շողաց, ամպը վորտաց: Բուրող անձրևը պարուրում է փոքրիկ գործարանը տրոփյունով, զնգոցով, ծփումով: Յեւ գործարանիկը՝ վհատ, գորշ՝ ասես բամբակով պատած, փնթփնթում է մի բան՝ ծուլ մուրճերի և անիվների ատամների փոփոխակի հնչոցներով: Նմ պիտի թնդա, խլացնե վորտը:

Ձուլարանից ծխի կապույտ ալիքը դանդաղ գալիս է և դողում դազգահի վրա: Անձրևային թելերը շեպում են նրան ճանձրալի պատին: Սմբակների հանկարծակի դոփյունը ճեղքում է կտուրի խուլ ձայնը և կտրվում դարպասի մոտ: Բակով՝ կաթիլների տակ թեքված՝ մեխի նման վազում է գործարանատերը: Ցատկում է շեմքից.

— Ուհ, ինչ մեծ, հրաշալի անձրև է: Ուղղակի մեղր է, իսկական մեղր: — Թափահարում է և ցուլց է տալիս ինձ ու փականագործներին միշտ փոքրիկ շոգեշարժ մեքենա.

— Ա՜յ, դպրոցում սրանով յեն սովորեցնում: Նճրը բան է:

— Չլինի՞ թե համաձայնել ես նորոգելու:

— Համաձայնել եմ, ինչ կա վոր: Չգիտե՞ս միթե՞ թե ինչ վարպետ եմ յես: Հարցրու, մար-

դիկ կասեն: Ինձ համար մի պտուտակի գլուխը մյուսին հարմարեցնելը չնչին բան է: Դուք ցմահ չեք անի այդ բանը... Յես...

Գործարանատերը պատմում է իր մասին: Մլու է անում ազատ սղմիչները մոտ իր մեջենայով և գալիս մոտս՝ մխոցի գլանաձև ծայրը ձեռքին.

— Թող բոլորը, այ այսպիսի մի բան սրիր: Այդ գիտուններին մի լավ ամաչացնենք: Ասում են՝ տնայնագործ ես, չես շինի: Յես ձեզ տնայնագործ ցույց կտամ: Շինիր, իսկ և իսկ ըստ գլանի... Մղիչը ահա այստեղ թող... պտույտաձև կտրիր...

Մխոցի գլանաձև ծայրը փոքր է, բարակ: Վառարանի դռնակներից հետո նրան սրելը ախորժեղի յե, բայց միթե փլատակի վրա կսրվի: Դրա մասին ասում եմ տիրոջս:

— Իհնչ: Այդպիսի մի չնչին բան չե՞ս սրի. — բղավում է նա:

— Բանը չնչինի մեջ չի: Տես...

Ցույց եմ տալիս, թե ինչպես գործիքը յետ է տալիս, թե ինչ կպատահի պտույտաձև կտրելու ժամանակ: Տերս փնթփնթում է: Կանչում եմ փականագործներին: Նրանք դեղեվում են, վնչ են ասում, բայց վերջիվերջո խորհուրդ են տալիս

տիրոջն նորոգել դազգահը կամ պատվիրել մխոցի դլանաձև ծայրը մի ուրիշին:

— Կնշանակե՛ յես պետք ե գնամ ոտարի գործարմնը. — հարձակվում ե նա նրանց վրա:—Ք՛ր22, կորե՛ք. — և զայրացած դառնում ե ինձ. — դժև, համբակ, ինչպե՞ս ես համարձակվում ինձ հետ «դժև»-ով խոսելու:

— Իսկ դժևք ինչու յեք «դու»-ով խոսում:

— Յես տեր եմ:

— Իսկ յես՝ խառատ:

— Դժև: Խնքոտ ես:

Հայհոյանքը, ողու հոտը զայրացնում են ինձ: Լուռ սրբում եմ ձեռքերս և սկսում եմ պատրաստվել:

— Այդ ի՞նչ ես անում. — հանդարտված՝ զարմանում ե տերս:

— Հեռանում եմ, ձանձրացա:

— Ինչպե՞ս թե ձանձրացար:

— Շատ պարզ: Մի այլ խառատի կապացուցեք, վոր ձեր դազգահը լավ ե:

— Խրտնեցիր: Իսկ յեթե յես հաշիվդ չտամ: Կամ կարծում ես, վոր յեթե դու գրքերի և թուղցիկների հետ գործ ունես, ուրեմն մի առանձին պտճղ ես: Քեզ բանտ ել կնստեցնեմ:

— Կամաց, կամաց. իմ խելքը գլխիս ե:

— Լսեցիք: Ե՛յ, դ՛ուք. — կանչում ե տերս  
փականագործներին: — Աղբ ե ձեր վրա ածում,  
ուրեմն դուք անխելք եք, հիմարներ եք, կնշա-  
նակե: Մենակ նա՛ յե խելոք:

— Սպասեցեք, նրանք ել կխելոքանան:

— Ի՞նչ ես ուզում ասել: Ի՞նչ ե այդ, ապստամ-  
բությո՞ւն ես պատրաստում ինձ մոտ: Յես...

Կանգ առնելով՝ տերս նետվում ե դռան մոտ  
խմբված ձուլողների կողմը.

— Ի՞նչ եք կանգնել: Ուզում եք ձրի փո՞ղ ստա-  
նալ: Այդ՞ ավագակի՞ց որի՞նակ եք առնում:

Ձուլողները նետվում են մի կողմ: Տերս վե-  
րադառնում ե դազգահի մոտ և գրգռված փընթ-  
փնթում.

— Իսկ դու այս անգամ հեռացիր: Թե չե  
փորձանք կբերես գլխիս: Սատանան գիտե, թե  
ինչ պտուղ ես դու:

— Այս ըոպեյիս, սպասեցեք:

Գործիքներս դնում եմ գրպանս և գնում  
մնաս բարով ասելու: Փականագործները վողջերթ  
են մաղթում հապճեպ, լուռ: Ձուլողները վազում  
են, խմբվում դռան մոտ, ձեռք են տալիս և  
կանչում.

— Կնշանակե՛ գնում ես ավելի հեռունքը  
լողալու:

— Կամուրջներ կոխկոտող գրասենյակը:

— Գնա... Մեր վորջը քո ճաշակին չի հարմարվում...

— Ինչպիսի բարեկամներ են,— կծու ծաղրում է տերս:

Սոնավություն բուրոց բակով, կաթիլների հընչյունի տակ գնում ենք դեպի կողքի շենքը: Նախասենյակում սեղանն է՝ վրան լիքը որինակներ, կաղապարներ և եսքիզների մի հակ: Տերս նըստած է նրա առաջ և ճնշված ասում է.

— Իսկ մխոցի գլանակի ծայրը, իրավ, պետք էլինի պատվիրել մի ուրիշին. յես մեկեն գլխի չընկա: Դու, յեղբայր, գիտես ինչ. մնա աշխատիր...

— Ձեմ ուզում...

— Դեհ, գոնե մինչև մայիսի մեկը...

— Ինչո՞ւ մինչև մայիսի մեկը:

— Անկարգություն է, վոր դազգահը այդ որը չգործե:

— Շատ ել մեծ անկարգություն չէ:

— Քեզ համար: Դու միայն քո մասին ես խոսում, իսկ յես մարդկանց մասին պետք է մտածեմ:

— Մտածեցեք, իսկ յես կհեռանամ հիմա, ձանձրացնա:

- Ախր ի՞նչը ինձ մոտ քեզ ձանձրացրեց:  
 — Բոլորը. կեղտը, դազգահը, վառարանի  
 արքունսարքը, դուք...  
 — Յե՛ս ել... Ախր ինչո՞վ:  
 — Անհանգստությամբ, անհեթեթությամբ,  
 խրատներով...

— Հա—ա՛... Դե, դա քո գործն է... Միայն  
 գո՛ւր է այդ... Շատ ման կգաս, շատ կթափառես  
 անգործ, պարասպ-սարաս:

— Վոտքերն իմն են, հո վարձելու չեմ:

Տերս չխկչխկացնում է համրիչը, հանում է  
 քսակը և փնթփնթում.

— Ջահելությո՛ւն: Կարծում ես թե ոգո՛ւտ  
 ունեմ ձեզանից: Ատաված վկա, ծայրը ծայրին  
 չեմ հասցնում: Ինքնասիրության համար եմ  
 կռվում. ուզում եմ ցույց տալ վոր յես ել տեր եմ:

Քաշում եմ ափիս մեջ փողերը և, գլուխ տա-  
 լով լուսամուտի մոտ խմբված ձուլողներին, գնում  
 եմ արևով և խոնավությամբ լցված փողոցը:  
 Մայթերի վրա արտացոլումների ժանյակներն են  
 սլարում: Վոտքերիս տակ ճռճռում է նամ ավազը,  
 սլատի յետևից յեղրեանու հոտ է ինձ հասնում:  
 Ազատ եմ: Վաղվանից, գրքերս առած, կգնամ  
 գետի մյուս կողմը, տափաստան—և կսովորեմ,  
 կսովորեմ, մինչև վոր վոչ մի կոպեկ չմնա մոտս:

## X

Յետևում մութ տափաստանն է: Առջևում, աղյուսի գործարանի չորանոցների սապատների մյուս կողմում, սպիտակ լույսով քաղաքն է վառվում: Մեր գլուխների վերև յերգում են խարույկի լույսից հալածված մոծակները:

Մենք գյուղ ճամբեցինք բանտից ազատված մեր ընկերոջը: Տանը նրան դիմավորեցին մռայլ, Զահլա յեր տանում հայրը, փնթփնթում եր կինը, ծուռ նայում եյին վրան աչքաթող արած, կեղտոտ յերեխաները: Նա ամաչում եր մայրենի տան կուշտ, անտուն, վողորմելի կյանքի համար: Նա նախանձում ե մեզ՝ մենավորներիս, ազատներիս:

Նրա մասին խորհելը, կամ գուցե գիշերը, խըշխոցները, վոսկի ավելի նման ընկած աստղը տխրեցնում են հրապիվինին, և նա ձայնով միտք ե բերում Շեչենկոյի տողերը.

— Ինչպես ե այնտեղ ասված... Հն, հիշեցի.

Ցերեկ-գիշերի անցնում են շարքեր,

Անցնում ե ամառ: Խշշում ե կամաց

Սաղարթը դեղին... մարել են աչքեր...

Թե սիրտ և թե միտք քուն են ընկըղմած:

Մենք ականջ ենք դնում, մտածում ենք և լուռ ենք:

---

— Նվվոց ե այդ. — բացականչում ե Յուրկան:

— Ի՞նչն ե նվվոց:

— Հենց այդ խոսքերը, այդ խոսքերը: Դյու-  
թում են, փաղաքշում, բայց միանգամայն ուզում  
ես քշել նրանց՝ ուր հարկն ե: Կոճղերի պես  
կախված են վրադ, քարշ են ընկնում յետևիցդ...

— Դեհ-դեհ, — կշտամբանքով և դանդաղ ասում  
ե Կրապիվինը: — Մարդը այդ խոսքերը ասել ե  
գոցված բերանով, իսկ դու վատաբանում ես  
նրանց:

— Այո, վատաբանում եմ, — հուզվում ե Յուր-  
կան: — Յես ինքս ել սիրում եմ Շևչենկոյին,  
բայց, արի ու տես, վոր պղտորում ե: Նրա  
գրածները դեռ վոչինչ, իսկ ուրշներինը յերբ կար-  
դաս, հենց արտասուքներ են կաթում: Նրանց  
կարծիքով մենք վողորմած Ղազարոսներ ենք,  
վորբեր, խեղճեր, դժբախտներ: Իսկ մենք,  
յեթե ճիշտ դատես, տխմարներ ենք: Պետք  
ե բրերով մեր գլուխներին խփել, իսկ նրանք  
նվվում են և աստժու պոչից են բռնել. ո՛ր ես,  
տեր, տեսնո՞ւմ ես, լսո՞ւմ ես, ոգնիր նրանց՝ խըղ-  
ճուկներին, բարի արա նրանց, արժանի արա:  
Մարդիկ պետք ե լավ դառնան վոչ թե նրա հա-  
մար, վոր կա աստված կամ տեսակ-տեսակ ինչ  
վոր որենքներ Սինայի կատարից ու Սինայի ստո-

---

---

լրտից, այլ անպես՝ շատ հասարակ կերպով.  
Նրանց համար ճեռնտու յե լավ լինելը: Այո: Իսկ  
Նրանց պաշտպանում են, թե՛ մնաս չունի վոր դուք  
գարշ եք, — աղոթեցեք, աստված կներե, նրա  
զորութունը բոլորին կհասնի: Վհչ. յեթե դու  
գարշ ես, դարձիր լավ, ապա թե վոչ՝ լավ ե  
կախվիր, մի աղոթիր, չի ներվի: Նրանց պետք  
ե հարվածել ուրիշ կողմից:

— Դեհ, հարվածիր, ել ի՞նչ ես ճռնչում —  
փնթփնթում ե կրապիվինը:

— Չգիտեմ... խոսքերս չեն կապվում:

— Սովորիր:

— Սովորում եմ: Լինում ե, վոր քնել չեմ  
կարողանում: Բոլորը տեսնում եմ: Հենց մե-  
կեն կարտահայտեյի, բայց վհչ, չեմ կարող...  
Իսկ այդ վոտանավորները և ել ուրիշ բաները՝  
թոքախտավորների, դժբախտների, խղճուկների  
մասին՝ զգվեցրել են: Նրանց մեջ գեղջուկները,  
բանվորները չեն, այլ լալկան թափթփուկներ:  
Գիտեն միայն հառաչել ու նվվալ:

— Իսկ մենք՝ քո կարծիքով՝ թափթփուկներ  
չե՞նք:

— Մե՞նք: Գուցե դեռ իսկական մարդիկ չենք,  
բայց թափթփուկներ չենք. շնչում ենք, չենք  
թթվում:

— Չէ՞նք թթվում: Հ'ըմ... կրուժողներում մեծ ժողովներում թրև ենք գալիս:

— Իսկ դու յեւ ի՞նչ ես ուզում:

— Ի՞նչ եմ ուզում: Մեզ պետք եր հիմա շաղ տալ պատին նետած սիսեռի պես և ասել՝ շաղ յեկեք, ով ուր կ'ուզե: Այդ բանին մեր խելքը չի հասնում, նստել ենք քաղաքում, ճոնչում ենք, ինչպես, ա՛յ, դու յես ճոնչում: Խոսվածքով մենք խելոք ենք, իսկ գործով չենք ել յիրևում: Այսինչը հաճախում, հաճախում ե կրուժողը, լսում ե, լսում, կրակը կորցնում, սկսում ե թթվել և, մեկ ել տեսար... ամուսնացավ: Նրան՝ անպիտանին, սովորեցրին, նրա համար տանջվեցին, իսկ նա ձեռք բերեց փափուկ մահիճ, մանկիկներ և — պրծավ: Հասավ մուրազին...

— Հետո:

— Ի՞նչ հետո: Մի բան իմացար — տուր ուրիշին, ելի կիմանաս: Իսկ մենք միթե տալիս ենք: Ամենը մեզ, մեզ ենք վերցնում...

— Իսկ ինչպե՞ս պիտի տաս, յեթե չգիտես: Դու հենց պրով ես կտրում:

— Քարով կկտրես, յեթե շատ թրև գաս: Չէ՞ վոր մենք գլխով-վոտքով մտել ենք գրքերի մեջ: Մտածում ենք մեր կարդացածի մասին, խոսում ենք մեր կարդացածի մասին: Մեր ամեն

ինչը թղթով եւ խցկված: Գործի համար մարդիկ են պետք, իսկ նրանք չկան: Միայն թուղթ կա:

— Իսկ դու ինքդ քեզ նսնայպես, կարծեմ, անպատրաստ ես համարում: Այդպես ել ուրիշները:

— Յես: Յես թեև պատրաստ չեմ, բայց ուժիս ներածը անում եմ:

— Դեհ, ուրեմն արա, մի փնթփնթա փիս զոքանչի նման, — գրգռվում ե Յուրկան: — Մենք ել կանենք: Բոլորս միանգամից չե: Թող մեծանանք... Գլխավորն այն ե, վոր մեծանում ենք: Պետք ե ուրախանայիր, իսկ դու դժգոհ ես... Իսկ այն, վոր տղերքը ամուսնանում են, ինչ մնաս. չե՞ վոր սա վանք չե...

— Վանք չե, ամուսնացիր, խնդրեմ, գրողը քեզ տանի, միայն մինչև ականջդ մի խրվիր այդ ամուսնության մեջ, ապա թե վոչ՝ սիրտ ե խառնում: Ամուսնանում ե և դեն ե գցում ամեն բան: Ինչ հերոսություն... Ամեն մի ճնճղուկ ել ամուսնանում ե:

Նայում եմ գետնին: Յես հասկանում եմ կրապիվինին... բայց յերիտասարդության վրա նրա արած հարձակումները գրգռում են ինձ, և յես ասում եմ:

— Ինչո՞ւ դու այդքան հարձակվում ես գրքերի վրա: Չե՞ վոր առանց նրանց մենք վոչ մի բանի

մոտենալ չենք կարող: Իսկ այդ խոսակցությունները՝ ինչ վոր գործի մասին՝ ժամանակ ե թողնել: Նրանք միայն պղտորում են: Գործ, գործ, բայց ուր ե նա՝ այդ գործը: Արդյոք ամեն մարդ կարող ե գործ անել: Վերցնենք հենց ինձ: Դեպի մեծ գործարաններ, առանց անցագրի, ճամբաները բաց են իմ առաջ: Այնտեղ, յերիտասարդության մեջ, յես իմ տեղում կլինեյի, իսկ յես ստիպված եմ քարշ գալ տնայնագործների մոտ... Յեվ դեռ կույր ել եմ, այ՝ սովորում եմ... Այդպես ել շատերը...

Կրապիվինի և Յուրկայի լուսթյունը ինձ շփոթեցնում ե: Խոսքերը դժգունում են:

— Ասենք, դա բողոք չե... Յեվ դու իզուր քո հասցեյին ընդունեցիր: Յես ասում եյի ընդհանրապես, — փնթփնթում ե Կրապիվինը և, քիչ լուելուց հետո, ավելացնում ե. — Իու յերկար ժամանակ անգործ չես մնա. այ՝ մայիսի մեկը կտոնենք, քեզ կլծեն, հուպ կտան:

Յուզմունքը շունչս ե կտրում, ասես ձգվում եմ, բայց յես չեմ շարժվում: Ուզում եմ հարց ու փորձ անել Կրապիվինին և չեմ համարձակվում: Ձեռքովս մյուս ձեռքս եմ սեղմում. յես դեռ կույր եմ, յես դեռ պատրաստ չեմ, բայց թող, թող: Յես կերթամ:

Յերկրին են դիպչում մեր տոնի կարմիր թերթերունքները: Վորպեսզի նա ավելի վառ լինի, մենք իրար անցանք, վառվեցինք վերջին որերը: Վորպեսզի նա չբռնկվի, զինվորներ և կազակներ են մտցված քաղաք: Նա մոտենում է, սկսում է վառվել, դողում է հոգնած աչքերում: Իսկ շոցները կանչում են, կանչում՝ ինչպես միշտ: Յեվ նրանց կանչը ցավ է:

Գիշերային պահապանները գլխում են, քերում սպիտակ թերթերը: Ամբողջ գիշեր դողացող ձեռքերով մենք կպցրինք նրանց խորդուբորտ աղյուսներին և ցանկապատերին: Գլխեցեք, գլխեցեք, նրանք մեր մեջ են:

Տներից դուրս են գալիս քնկոտ, հորանջող մարդիկ և իրենց շուրջն են նայում: Մի վախեք, անցեք:

Գետի կողմից լսվում է մի խուլ ձայն: Յեզերքը գրկել են ծուխը, շոգենավերի ու նավերի գոլորշին և հևոցը: Շպարված ջաղացը դողում է: Ածխատարները քստքստացնում են գրաֆիտի տրեխները, կռանալով միանիվ սայլակների վրա: Վաճառուհիների շարքը մեծանում է: Կամուրջիկների վրայով, ճոճվելով, վազվզում

են տոպրակներ շալակած բեռնակիրները, վորոնք հագած են գուլնզգուլն վերնաշապիկներ՝ մինչև ծնկները: Ամենուրեք լարված ջիւեր, խուպուտ ձայներ և կշեռքի շղթաների զնգոց:

— Հեյ-հեյ: Դեն գցեցեք տաժանակիր աւտոբայի խելահեղ շապիկները:

\* \* \*

. . . Նավանորոգման գործարանը կուլ է տվել նրանց, վորոնց տոնը վառվել է սկսում: Արհեստանոցներից լավում են ձայներ՝ սաստիկ դղըրդոցի, մանրահարման և խուլ վորոտման: Այդպես, այդպես... Չլսեցին, չզգացին...

Թախիծով նայում եմ մի բուրդկային փակցրած ահռելի զգուշացման թերթին և նստում եմ գործարանի վոստիկանի մոտ, վորը նիրհում է:

— Ա—ա... դու ո՞վ ես. — ցնցվելով՝ համարյա բացականչում է նա և հառում է վրաս քնկոտ, բուրթ աչքերը:

— Խառատ եմ:

— Ա—ան, խառատ... գործագուրդ: Յես սիրում եմ խառատներին: Հանելուկային, բարդ ու խրթին աշխատանք է ձեր աշխատանքը: Յերկաթը, պղինձը կամ ելի մի ուրիշը... ժանգ են ունենում իրենց վրա, իսկ յերբ խառատին տաս,

ինչ վոր ուզես՝ կշինես... Նրան ապակու վայլ կտաս:  
Հեռու տեղից ես:

Դուրս ե գալիս վոր մենք համերկրացիներ  
ենք: Այդ ուրախացում ե նրան: Նա աշխուժա-  
նում ե և ձեռքը դնում ծնկիս:

— Այ՛ ինչ լավ ե... Յես գործարանում քեզ  
համար տեղ կճարեմ... Յես կարող եմ... քանի-  
քանիսի համար եմ ճարել: Այստեղի ժողովուրդը,  
ինքդ գիտես, այն չե, ինչ վոր մերն ե: Միշտ  
աշխատում ե այդ թուլցիկների հետ գործ  
տեսնել:

Համերկրացիս ծուռ նայում ե դեպի դարպասը  
և շշնջում՝

— Պատրաստվել ելին այսոր ապստամբվելու:  
Ի՞նքս կարդացի, կմ աչքերով... Ի՞նչ կա ապստամբ-  
վելու:— Վոր կյանքը թեթևանա, ապրելը հեշտ  
լինի: Դատարկ բան մի խոսքով: Բռնես նրանց  
բոլորին... ովքեր գրգռում են, և կամուրջից  
ջուրը նետես բոլոր ժողովրդի ներկայությամբ:

Դառնում եմ և նկատում, վոր համերկրացուս  
աչքերում բթությունն չի, այլ հավատ. կյանքի  
մեջ ամեն բան իր տեղումն ե, ամեն մեկը, ով  
դիպչում, տեղից շարժում ե մի բան նրա մեջ,—  
թշնամի յե... Այ՛ այսպիսի մեկը, անշուշտ, ինձ  
մատնեց նավահանգստի արհեստանոցում: Նրա

դեմքից, խոսքերից՝ թանձր խավարի շունչ ե  
փչում: Չարմանալի մարդ. համերկրացիներին  
ճիշտ այնպես ե կարծում, ինչպես ինքն ե: Նա  
չի հավատա, յեթե ասեմ, վոր իմ գրպաններում,  
գոտուս տակ հազարավոր թռուցիկներ կան, վոր  
յես պիտի ցրեմ նրանց: Պատմում ե հայրենիքի  
մասին, պատմում ե ծանր ու բարակ, սիրալիր,  
և յես թափով հարցնում եմ.

— Իսկ դու չես վախենում:

— Ինչից:

— Հետևել նրանց, վորոնք թռուցիկներ ունեն:

— Բա ի՞նչ արած, յերբ պետք ե... Դու միայն  
փորձիր նրանց ազատ թողնել...

— Իսկ յեթե սպանե՞ն:

Համերկրացուս դեմքը մոխրի գույն ե ստանում:

— Չե—ե, սպանե՞ն... Ի՞նչ ես ասում:

— Իսկ դու միթե չես մտածել դրա մասին:

— Այստեղ ի՞նչ մտածելու բան կա:

— Բայց յեթե...

— Ի՞նչ յեթե: Յես քեզ հետ քաղցր, բարե-  
կամաբար եմ խոսում, իսկ դու տակից-գլխից  
դուրս ես տալիս...

— Վախեցար. — ծիծաղում եմ յես՝ վեր կե-  
նալով: — Պետք եր առանջ մտածել: Այժմ ուշ ե  
ծիծաղելը...

Համերկըացուս վիզը ձգվում է: Նա ծակում է ինձ աչքերով, կարծես գլխի յե ընկնում թե ով եմ յես, և ինքն իրեն չի հավատում:

— Այս որերս կգամ քեզ մոտ, — ասում եմ: — Դու հակիր, քնիր:

Նա լուռ է...

\* \* \*

...Յերկաթուղու ճամբի վրայով ձգված կամուրջի վրա գլխարկս պահում եմ գրպանումս և պեռոնի\* վրա դես ու դեն շտապող մարդկանց մեջ ձգում եմ թուռցիկների մի յերամ: Տեսնում եմ, թե ինչպես նրանք յերևում են — անհայտանում, ցիր ու ցան են լինում, և սլանում եմ աստիճաններով:

Խանութիկների և վաճառասեղանների յետևում հանում եմ բաճկոնս, հագնում եմ գլխարկս և դուրս գալիս: Կամուրջի մոտ վազվզում են յերկաթուղու կայարանի ժանդարմները:

«Ընկե՛ք դես ու դեն, ընկե՛ք դես ու դեն»:

\* \* \*

...Գլխավոր փողոցը — մի խանութ է. առուտուր է անում, փայլում, գրավում: Ո՛վ է ուզում

\* Յերկաթուղու կայարանի այն մասը, վորի առաջ կանգնում է գնացքը:

բախտավոր լինել, առողջ, հարուստ և գեղեցիկ՝  
Գնեցեք, գնեցեք: Մի սակարկեք, վճարեցեք  
ավելի, և կլինեք ավելի գեղեցիկ, ավելի առողջ,  
ավելի բախտավոր, ավելի հարուստ: Այստեղ ամեն  
բան ծախվում է... Ընտրեցեք, նայեցեք, շլացեք,  
ե յեթե կամենաք՝ ծիծաղեցեք: Վորպես հալվա  
և կոշկաներկ, վորպես խմիչք—անոթներով, գրը-  
վանքաներով և շշերով—ծախվում են ձեր ցնորք-  
ները: Գնեցեք:

Յեթե սրտում ծիծաղը խամրել է, նրա մեջ  
կծնալի զայրույթ: Յեթե զայրույթի համար տեղ  
չկա, կծնալի չարություն, զզվանք: Այո, այո...  
Դուք միայն ուշադրությամբ դիտեցեք...

Ծախու գրվանքաների, անոթների, արշիւնների  
և շշերի միջև մենք այսօր կկանչենք մերի մա-  
սին, վորը նման չե խանութի, ուր դժբախտները  
բախտ են վաճառում:

\* \*  
\*

...Դեմքերից, զգեստներից և ձեռնափայտերից  
ձանաչում եմ մերոնց՝ հարազատներիս: Նրանք  
մերթ-մերթ յերևում են անցորդների միջին,  
խմբվում են գրքերով ցուցադրված լուսամուտ-  
ների առաջ, թերթի խմբագրության առաջ և  
հայտարարությունների համար ծառայող սյուլների

դեմ: Այդպես, սպասեցեք, սպասեցեք: Պարտի-  
զում ինձ շնչում են՝

— Հետաձգված ե մինչև յերեկո:

Ուժերս թուլանում են: Տեղ եմ բռնում նըս-  
տարանի վրա, բայց յերևակայությանս մեջ  
պտտվում են դազգահներ, մեքենաներ. ականջ-  
ներս լի յեն սաստիկ դղրդոցի ձայնով, և սիրտս  
ցնցվում ե: Քայլում եմ:

Մի գործարանից անցնում եմ մյուսը, լուսա-  
մուտից—լուսամուտ: Զրնգում ե, հեռում, գար-  
նում: Մերթ-մերթ յերևացող փոկերը հոգուս մեջ  
դառնության սարդոստայն են հյուսում:

Շչոցներ, գոռացք, խափանեցեք ձայների  
հաշված վազքը: Դեհ, մուրձեր, դուրեր, կար-  
կիններ, դազգահներ: Չե՞ վոր տոն ե, տոն...

\* \* \*

...Գետափին, շտեմարանների մոտ, բեռնող-  
ների բազմության մեջ նետում եմ թուուցիկների  
մի յերամ: Մեկը յետևիցս պինդ բռնում ե իմ  
ուսերից.

— Ա՜ն, բռնվեցիր...

Բայց նրա ձեռքերի վրա բռնուկներն են իջ-  
նում՝

— Թո՛ղ:

— Մի՛ դիպչիր:

— Ի՜նչպէս թե՛ մի դիպչիր:

Ահա՛ նա, պատրաստվիր: Սպասում եմ հար-  
վածների, աղաղակների... Նայում եմ շուրջս,  
տեսնում եմ, թե ինչպէս արագ հավաքում են  
թռուցիկները: Մի քանի հոգի, շուռ գալով, ինձ  
բազմութեան միջից դուրս են հրում: Մեկը յետե-  
վիցս խապոտ ձայնով ասում է ինձ՝

— Հեռացիր, շուտ:

Յետ եմ նայում, փնտռում եմ նրան: Մեջքեր,  
ուսեր, աչքերի փայլեր բրոնզե դեմքերի վրա:  
Յերկայն վերնաշապիկներ քրտինքի բծերով: Բո-  
լորը մերոնք են:

Գնում եմ շտեմարանների յետև: Կանայք  
ասեղներով տոպրակներ են հյուսում և տխուր  
յերգում: Լավ կլիներ փողոց քշել նրանց, ձայ-  
ները լարել ուժով և խլացնել կառքերի աղմուկը,  
պանդոկների նվագածությունը և փողերի զնգոցը:  
Աղաղակել մեջքերի ցավի, կեղտի և թախծի  
մասին: Աչքերի՛ լույսով (վորոնք միլիոն անգամ  
ցցվել են դեպի յերկինք՝ զոռից) մթնեցնել  
փայլը կեղծ-ատամների, շողքը վոսկու և կարմիր  
շպարների, և շափաղը մետաքսի ու թանկագին  
քարեղենների:

\* \* \*

...Յերեկի լույսը հալ ե ընկնում: Մառերն իրենց ճյուղերով իրար են ձգվում, և փողոցը նման ե լույսի սպասող յերկայն լապտերի: Մտվերներ են դես ու դեն վազում: Մայթերը խուլ աղմուկի մեջ են: Իսկ քարած փողոցը—ճայթոցի ու բոմբյունի մեջ: Լույս տվեք, ավելի շատ և ուժեղ լույս: Այդպես, ել ավելի պայծան:

Աչքերս շտապ դառնում են ժամացույցին: Սլաքներ, համերանշխ գործեցեք: Յետ ու առաջ են անցնում ձիավոր կազակները: Առջևում՝ սպիտակ ձիու վրա նստած ե մի ծերուկ՝ սպիտակ մորուսով՝ յերկու կողմ կիսված: Ասես վրձինով քաշած մի նկար ե. ձին խաղացնում ե, և ըստվերովն հիանում: Հիանալի յե, հիանալի...

Պարտեզը և շուրջը լցված են ժողովրդով: Այստեղ, այստեղ յեկեք բոլորդ: Մի հավատաք անիմլերի դղրդյունին և ճրթճրթոցին — նրանք կմարեն: Միջափողոցներում, բակերում կանգնած են զինվորներ: Հանկարծակի յերևում են և պտտում արագավազ, փնտռող գամփոները: Թող: Թող ձեր սրտերը բաբախեն, թրթռան վայրկյան առ վայրկյան: Մոտենում ե ժամը սրարշավ:

Բոլորը այստեղ են՝ Յուրկան, Կրապիվինը, Գոլուբևը, Իվանիչը: Չանձրույթից վիրավորված

ցերեկը արդեն մեռնում ե: Ձեռք-ձեռքի տվեք:  
Աչքերս վերջին անգամ հառում եմ ժամացույցին:  
Մի ակնթարթ ես: Ականջներդ սրեցեք, հիշեցեք  
ձեր կրածը, ծաղկեցեք ցնորքներով... Յեվ դեպի  
յերկինք, դեպի աստղերը: Ահա, լսեցեք, այժմ  
վորոտընդոստ կհնչե... Ահա...

— Դեպի փող-ո-ոց:

Իմ մեջ լսվում ե հազարաձայն կանչը՝

— Ա-ա-ա-ա:

Յեվ բաց ե անում ծնոտներս:

Յես նետում եմ աղաղակներ՝ «կորչի»-ի և  
«կեցցե»-ների մեջ... Իմ ձայնը մի կաթիլ ե,  
բայց կաթիլը կմիանա կաթիլին և դեպի վեր,—  
դեպի բարձր, բունն ի վեր, վորպես զի ծառը  
կանաչի, ծիծաղե, աղմկե, վիճե...

Միմյանց ձեռք են մեկնում, ամուր սեղմում:  
Այդ լարումը անցնում ե դեպի սիրտը: Այդպես,  
այդպես: Կաթիլը՝ կաթիլին, արյան կալակը՝ արյան  
կալակին, միտքը՝ մտքին—զողվեցեք, զողվեցեք:  
Յեվ գնացեք միաքայլ, ել հաստատ, ել հաստատ:

— Կորչի...

— Ուռա-ա-ա...

Առջևում՝ գլխից թռչում ե գլխարկը: Նայեցեք-  
մերկ գլխի վրա արյունակերպ ծավալվում ե կար-  
միրը և ցատկում դեպի լույսը: Վերև, ել վերև:

---

Լ՛ույս ե դա: Ահա... Գլխի վրա առատ թափված  
կարմիրից ամբողջ փողոցով, ամբողջ գիշեր հնչում  
ե արծաթե «կեցցե»-ն... Ե՛յ, վորի ձեռքերը  
ասեղնագործել են,—սա՛ ձեր մատերի դողը, պող-  
պատի փայլը, ձեր աչքերի կայծերն են վոր վառ-  
վում են: Իսկ նրանց միանում են մեր կայծերը...  
Ե՛լ ավելի վառ, ե՛լ ավելի վառ: Ե՛լ ավելի սերտ:  
— Յերգում են... որորվում են ձայները հուզ-  
մունքից և լարումից. յերգին ձայնակցում են  
կողքից, յետևից, առջևից...

Ե՛լ ավելի բարձր: Յերեկ, կայց, մի մեռնիր:  
Չանձրույթը հյուժվում ե, ահա սկսվում ե գա-  
րունը: Կանաչում ե, աղմկում, վիճում: Մենք  
ձայներից քեզ պսակ կհյուսենք: Դու նրա հետ  
կսլանաս յերկրի վրայով: Սպասիր, սպասիր...

---

Ուսերի վերև կարմիրը յերբերվում ե: Նրա յե-  
տևից հայտնվում են ձիու դունչը և սպիտակ  
մորուքը՝ յերկու կողմ կիսված... Յերգեցե՛ք,  
ավելի բարձր յերգեցե՛ք: Չայներով խլացրե՛ք նրա  
գոչյունը...

Առջևում՝ հարյուրավոր ձիերի դնչեր, հարյու-  
րավոր կարտուզներ և ձեռքեր՝ հաստ մտրակներ

բռնած: Մեր ձայները խլացնում, տակո՞վն ե  
անում հանկարծակի ճիչերի և սմբակների զարկի  
մրրիկը: Ձիերը մոտիկ են, հաստ մտրակները  
բարձրանում են: Կարմիրը դողում է, խոնարհ-  
վում դոփյունի, մռնչյունի և ճայթյունի մեջ:  
Փրկեցե՛ք, փրկեցե՛ք...

Բայց մտրակները հարվածում են, շաշում, շա-  
ռաշում: Ձինվորները կողքիս են: Հրացանի կոթը  
ճզմում է իմ մեջ աղաղակող կանչը, և ամուր  
սեղմում եմ ընկերոջս ձեռքը: Ուսերի և գլուխների  
ցրվող ալիքը մեզ քշում է մայթի յերկարությամբ,  
և մենք շարդվում ենք հրացանների կոթերից:

Մեզ հրում են միջափողոցը, և մենք — արդեն  
այլ բան ենք զգում. մեր շուրջը ոտարներ են,  
դողացողներ: Թշշում են, փրփրում, վատաբանում:  
Յուրկա, Կրապիվին, այդ բոլորը մեր հասցեյին  
են ուղղած, մեր հասցեյին: Մենք նրանց խան-  
գարեցինք գնել, ծախել, ընտրել, հղփանալ ու  
ապուշանալ...

Ձայրացածների և վախեցածների միջից շտա-  
պում ենք դեպի հարևան փողոցը: Բակի միջով  
մտնում ենք պարտեզ և քայլում դեպի դուռը,  
դեպի այն տեղը, ուր մեր յերգը կտրվեց:

Կառքերը անցնում են փողոցով, զինվորների  
շղթան դեռ կանգուն է, շարքով գնում են ձիավոր

---

---

կազակները: Մերուկը առջևումն է, սպիտակ ձիու վրա՝ խաղացնում է նրան ինչպես հաղթած ուրու:  
— Յուրկա, վերջացավ...

Մի ծիծաղեք, մի ծիծաղեք, ցուցանակներ, մենք կզանք յերկրորդ անգամ, յերրորդ անգամ,—մինչև վոր հրացանների կոթերը չջարդվեն մեր կրծքերին:

Մեր թևերը գորանում են...



Պ Ա Հ Ա Ն Ջ Ե Ց Ե Ք

Մ Ե Ր

Գ Ր Ա Ց Ո Ւ Ց Ա Կ Ը

*[Faint, illegible handwritten text]*

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045013

25 407.

[154]

A  $\frac{1}{219}$



---

**Н. Ляшко**  
**Крепящие крылья**

---

На армянском языке

---

**ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР**  
Москва, центр, Никольская, 10